

Ղազարոս Աղայանը, Սմբատ Շահազիզը, Պետրոս Դուրյանը և ուրիշներ:

Հայ մեծատաղանդ այս բանաստեղծների հուզական ու ոգեշունչ բանաստեղծությունները երգի էին վերածվում քաղաքային ժողովրդական երգին բնորոշ ստեղծագործական մեթոդով: Այս կերպ եղանակավորված բանաստեղծությունները ձեռք էին բերում հուզական նոր որակ և որպես ժողովրդական, տարածվում երաժշտական կենցաղում: Այս երգերի գեղարվեստական լավագույն նմուշները շարունակում են կենցաղավարել մեր օրերում ևս:

Քաղաքային ժողովրդական երգերը հիմնականում դրսևորվում են հայրենասիրական, քնարական և կենցաղային ժանրերում: Քաղաքային երաժշտական ֆոլկլորի արտահայտչական միջոցների համակարգը ձեվավորվել է ազգային և այլազգի երաժշտական արտահայտչամիջոցների օրգանական միահյուսմամբ:

Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստում նրկատելի են գեղջկական և աշուղական երգարվեստի հատկանիշները, ինչպես նաև այլ երաժշտական մշակույթների ազդեցություններ: «Վերջինը գոյացել է հիմնականում հայրենասիրական բանաստեղծությունները ժողովրդի լայն շրջանակներում արագորեն տարածելու նպատակով: Նման մոտեցման վառ օրինակ կարող է հանդիսանալ Միքայել Նալբանդյանի փոխադրած գարիբալդիական զինվորի հարսնացուի (մեկ այլ դեպքում քրոջ. - **խմբ.**) զգացմունքներն արտահայտող «Մեր Հայրենիք» երգի մեղեդին» (3. էջ 7):

Քաղաքային երգերը, լինելով ուշադրության կենտրոնում հավաքվել են, գրանցվել և հրատարակվել բազմաթիվ երգարաններում: Այդ աշխատանքները կատարող երախտավորների շարքում նշենք Գ. Երանյանին, Բ. Կարա-Մուրզային, Մ. Եկմայանին, Ս. Ամատունու* և Բրուտյանին, Ս. Դեմուրյանին, Մ. Թումանյանին, Վ. Սամվելյանին, Ս. Մելիքյանին և շատ ուրիշներին: Ներկա հակիրճ անդրադարձը նվիրված է այս ոլորտում Կոմիտաս վարդապետի կատարած աշխատանքներին:

Ինչպես գիտենք, Կոմիտաս վարդապետի ուսումնասիրությունների մեջ առանցքային տեղը պատկանում է գեղջկական երգերին, քանի որ նրա համոզմամբ, այն առավել բնորոշ ազգային նկարագիր ունի ու հայկական պրոֆեսիոնալ երաժշտության հիմք կարող է հանդիսանալ: Այնուամենայնիվ քաղաքային մշակույթը ևս այնտեղ մի ինքնուրույն և ամբողջական բաժին է կազմում:

Կոմիտասը լինելով իր ժամանակաշրջանի առաջատար մտավորականներից, չէր կարող անտարբեր մնալ քաղաքային մշակույթի տարբեր դրսևորումների՝ հատկապես ազգային ազատագրական և հայրենասիրական երգերի հանդեպ: Կոմիտասի Երկերի ժողովածուի 4-րդ հատորում ներկայացված են այս ժանրին պատ-

կանող նմուշներ և դրանց մշակումներ, որոնց Վարդապետն անդրադարձել է դեռ ուսման տարիներից՝ 1890-ականներից մինչև 1914 թ.:

«Կոմիտասն իր ամբողջ գործունեությամբ հանդես եկավ իբրև քաղաքացի-արվեստագետ, նա անտարբեր չգտնվեց այն օրերի համար «օրակարգի» հրատապ խնդիրներից նաև այս մեկի՝ ազգային ազատագրության խնդրի նկատմամբ: Նրան և՛ որպես քաղաքացու, և՛ որպես արվեստագետի հուզում էին հայրենի ազգային պետականության կորուստը, արևմտահայերի ծանր վիճակը, ռուսական ցարիզմի գործադրած ազգային ճնշումները, հարազատ ժողովրդի լուսավորության ու վերածննդի խնդիրները» (4. էջ 7):

Այս բոլոր խնդիրները հնչեցվում են ազգային հայրենասիրական երգերում: Տեղին է նշել նաև Մ. Նալբանդյանի գնահատականն այս երգերի վերաբերյալ, օրինակ՝ «Տէր, կեցո զՀայս» երգը: «...» յուր բովանդակության թե՛ յուր բանաստեղծական վառվածքն հորինվածքի և թե՛ հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկեր հանդիսացնելու և դորա բարվոքելու համար հարկավոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մասնավոր ուշադրությանը» (3. էջ 101): Կարծում ենք, այս նրկարագիրը կիրառելի է նաև այս բնույթի այլ քաղաքային երգերի դեպքում:

Կոմիտաս վարդապետն իր հերթին նույնպես արժեվորել է ազգային հայրենասիրական երգերը: Գեղջկական երգերի հետ մեկտեղ, նա հավաքել և գրանցել է այս ժանրի նմուշներից: Արաքս Սարյանի «Հայ քաղաքային ժողովրդական երգերի ընտրանի» ժողովածուում գետեղված են Կոմիտաս վարդապետի գրչին պատկանող նմուշներ (1. էջ 25): Այլ բանահավաքների շարքում այստեղ ներկայացված են կոմիտասյան գրառումները՝ «Դարդս լացեք», «Երգ պանդուխտ պատանեկի», «Հայրիկ, Հայրիկ, քո Հայրենիք»:

Ձայնագրելուց հետո, Կոմիտաս վարդապետն այս բնագավառի բավականին խայտաբղետ ցանկից ընտրել է լավագույն տարբերակները, մաքրել ու հղկել է դրանք, անհրաժեշտության դեպքում երգերի տեքստերը խմբագրել է, ազատելով ավելորդ անցանկալի բովանդակությունից:

Վարդապետի բազմաձայնած և մշակած երգերի շարքում կան խորապես տխուր քնարական բնույթի՝ Վանի կոտորածին նվիրված երգը, կամ՝ «Թող բլբուլ չերգե» ստեղծագործությունը, սակայն գերակշռողն առույգ տրամադրություն ունեցող, քայլերգային, լավատեսական բնույթի երգերն են՝ հուսադրող ու հավատով լեցուն:

Նեղինակը հատուկ ուշադրություն է հատկացնում Վարդանանց պատմությանը: Այս հերոսական թեմային նվիրված երգերի շարքում նշենք «Բամ, փորոտան», «Հիմի էլ լռենք», «Մեզ նոր արև ծագե», «Իմ հայրենյաց հոգի Վարդան», «Ով հայկազունք» նմուշները:

«Երգերի մեղեդիները մշակելիս Կոմիտասը նույնպես ստեղծագործական մոտեցում է ցուցաբերել և ներդաշնակելիս այդ երգերը ևս, ընդունել է որպես իր «հարազատ զավակներ, - ինչպես նշում է Ռ. Աթայանը, -

* Սահակ վրդ. Ամատունի, Ժողովրդական երգերի ձայնագրյալ ժողովածու, 1884 թ. (անտիպ), Կոմիտաս, Հայ ժողովրդական երգեր և պարեր, 1891-1913 թթ. (հրատարակվել է 1950 թ.), Կոմիտաս վարդապետ, Ծար Ակնա, ժողովածու, Էջմիածնի տպարան, 1895 թ., Բրուտյան Ա., Ժողովրդական երգեր, պարեր և պարեղանակներ, 1895 թ.:

նրանցում, արտահայտիչ ընդհանուր պարզության պայմաններում, կարելի է տեսնել կոմիտասյան հնարամտությամբ գտնված նույնքան արտահայտիչ հարմոնիկ թարմություններ՝ դիմամիկ ու երանգավոր դարձվածքներ» (2. էջ 7):

Ուսումնասիրելով Կոմիտասի քաղաքային երգերի մշակումները՝ պատկերացում կազմեցինք այդ աշխատանքների ընթացքի և ծավալների մասին: Առաջաբան և Ծանոթագրություն բաժիններում գետնդրված Ռ. Ա. Աթայանի հոդվածներում նկարագրվում է Վարդապետի՝ այս ժանրում կատարած ստեղծագործական աշխատանքը:

Հրատարակված կամ ձեռագիր մնացած երգարաններում և հավաքածուներում հանդիպում ենք բազմաթիվ ազգային հայրենասիրական բնույթի երգեր: Դրանք ներկայանում են տեքստերով, իսկ ավելի ուշ շրջանում նաև մեղեդիներով հանդերձ: Ինչպես գիտենք, քաղաքային երգերն ստեղծվել են հիմնականում հայտնի բանաստեղծների ստեղծագործությունների հիման վրա, իսկ մեղեդիները հաճախ ընդօրինակվել են նախնիներում հայտնի կամ սիրված երգերից: Այս մեղեդիները հիմնականում կրում են արևմտաեվրոպական մշակույթի ազդեցությունը: Դրանց բնորոշ քայլերգայնությունը ռազմական ոգին արթնացնելու նպատակ էր հետապնդում, ինչպես նաև քաջություն ու սեր հայրենիքի հանդեպ: Այդ պատճառով, այս ժանրի երգերը տարբերվում են գեղջկական երգերից ձայնակարգային, մեղեդային, մետրառիթմական ու երբեմն ազգային ինքնուրույն լեզվամտածողության թերի դրսևորված հատկանիշներով:

Կոմիտաս վարդապետը, անդրադառնալով քաղաքային ֆոլկլորի նմուշներին, հստակ գիտակցում էր դրանց առանձնահատկությունները, սակայն այս երգերն այնքան սիրված, պահանջարկ վայելող, մեծ ու կարևոր գործառույթ կրող էին, որ անտեսել այս երգերի դերն ու նշանակությունը հատկապես այդ ժամանակաշրջանում անհնար կլիներ և անհեռատես:

Կոմիտասի Երկերի Ժողովածուի 4-րդ հատորում գետնդրված է 26 խմբերգ, 4 մեներգ, իսկ հավելվածում՝ բազմաթիվ տարբերակներ և ինքնուրույն նմուշներ:

Հատորում տեղ գտած քնարական երգերի նմուշները միայն լրացնում են այդ ժամանակաշրջանի քաղաքային երգերի հայրենասիրական ոգին ու բովանդակությունը: Ս. Շահագիզի խոսքերով գրված «Ես լսեցի մի անուշ ձայն», Ա. Իսահակյանի՝ «Արևն իջավ սարի գլխուն», «Դարդս լացեք, սարի սմբուլ» երգերն այդ օրինակներից են:

Ժամանակի ազգային-քաղաքական կյանքի գործնական պահանջներով է թելադրված եղել նաև Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին և Վեհապատին գովերգող երգերի ստեղծումը, և պատահական չէ, որ Կոմիտաս վարդապետն այդպիսի երգերից երկուսն անվանել է «Ազգային օրհներգ» (1891 թ.):

Ինչպես նշում է Ռ. Ա. Աթայանը, «ներկա հատորում պարունակող ստեղծագործությունները, իր գործունեության վաղ թե ուշ շրջանում Կոմիտասը կատարել է, և դրանք միշտ հաջողություն են գտել, այդ մասին բազմաթիվ տեղեկություններ կան ժամանակի հայկական

մամուլում» (6. էջ 10): Երկերից մի քանիսը վերագրվում են արդեն իսկ 1890-ական թվականների առաջին կեսին («Մութ գիշերվա մեջ» 1892 թ., «Օն թինդ ի խինդ» 1894 թ.): Հաճախ մշակումներն ունեն բազում տարբերակներ, որոնք գրված են տարբեր ժամանակահատվածներում, օրինակ՝ «Ես լսեցի մի անուշ ձայն», կամ այլ կերպ՝ «Երազ» երգը:

Այս երգին Կոմիտաս վարդապետն անդրադարձել է թե՛ վաղ՝ էջմիածնական, թե՛ ուշ՝ պոլսական տարիներին: Հայտնաբերված և հատորում ներկայացված բոլոր տարբերակները եռաձայն խմբերգային մշակումներ են (մեկը՝ հիմնական բաժնում, երեքը՝ հավելվածում): Սակայն Կոմիտասի արխիվում՝ թիվ 498 թղթապանակում, խմբերգային տարբերակներից մեկն ունի նաև «փոքր և մեծ ֆլեյտայի, կլառնետի և ջութակի նվագակցություն»: Հավանաբար այս տարբերակն է կատարվել 1908 թ. ապրիլի 27-ին Գևորգյան ճեմարանի աշակերտական գրական երաժշտական երեկույթին, որի հայտագրում «Երազ» երգի համար նշված է «նաշնակեց և նվագորդի* վերածեց Կոմիտաս վարդապետ» (6. էջ 189):

Այս հանրահայտ ու մինչև այսօր սիրված և հաճախ կատարվող երգի միաձայն տարբերակը գտնում ենք տարբեր ժամանակաշրջանների և տարածաշրջանների երգարաններում, ի դեպ, տարբեր բանահավաքների և երգարաններ կազմողների կողմից ներկայացված: «Երազ» երգի ձայնագրություններն ունեն բազում տարբերակներ, սակայն մեղեդու հիմնական կորիզն անփոփոխ է: Երգի նոտագրված հիմնական տարբերակումներն արտահայտվում են մետրոռիթմական փոփոխություններով: Օրինակ՝ Ս. Դեմուրյանի գրանցած տարբերակում չափը 2/4 է (3. էջ 54), մեկ այլ երգարանում երգը գրանցված է 4/4 չափով (7. էջ 104): Սակայն կոմիտասյան բոլոր տարբերակները գրված են 9/8 չափում: Այստեղ հարկ կա նորից հիշելու այն փաստը, որ քաղաքային երգը բանավոր ավանդույթ է և բանահավաքների գրառումները, որոնք XIX դարի վերջում և XX դարի սկզբում կատարվում էին բացառապես լսողությամբ, հիշողությամբ, հաճախ կրում էին բանահավաքի երաժշտական ազդեցությունը, որը պայմանավորված է մի շարք մասնագիտական և անհատական հատկանիշներով: Նշենք նաև, որ բանահավաքը հիմնականում երգը գրանցում էր հայկական նոտագրությամբ, ինչպիսի օրինակով որ մեզ են հասել բազմաթիվ քաղաքային և գեղջկական երգեր, և միայն հետագայում դրանք փոխադրվել են եվրոպական նոտագրության: Չնայած այս ամենին, երգերը մեզ են փոխանցվել բավականին գրագետ գրանցված, իսկ տարբերակների նմանությունները հաստատում են երգի բուն նկարագիրը: Կոմիտասյան «Երազ» երգի մետրառիթմի ընտրությունն ամբողջացվում է խմբերգային մշակման համատեքստում, առաջ քաշած գեղարվեստական խնդիրների լուծումներով: Մշակումները կատարված են տարբեր խմբերգային կազմերի համար, բոլոր նմուշները գրված են տարբեր տոնայնություններում, ինչն ընդլայնում է այս խմբերգե-

* Նվագորդ – այս պարագայում պետք է հասկանալ անսամբը, նվագախումբը:

րի կիրառման շրջանակները:

XIX դարավերջի հայրենասիրական ամենատարածված երգերից մեկն է «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք» երգը, որը նաև ամենից ավելի ժողովրդականացած այն երգերից է, որոնք նվիրված են եղել Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին (Մկրտիչ Ա Վանեցի, 1820-1907 թթ.): Խոսքերի հեղինակն է վանեցի Մեսրոպ Ջանիկյանը: Այս երգը հաճախ հանդիպում ենք ժամանակի ձեռագիր ու տպագիր երգարաններում, ինչպես նաև բազմաթիվ ժողովրդական բանավոր կատառումների մշակված տարբերակներով:

Ինչպես նախորդ նմուշի դեպքում, «Հայրիկ» երգի բոլոր տարբերակներին բնորոշ է լայնաշունչ զարգացում, խորը քնարականություն, ինչը զգալիորեն բարձրացնում է այս մեղեդու գեղարվեստական արժեքը:

Ռ. Ա. Աթայանի ուսումնասիրությունները բերում են այն եզրակացության, որ այս մեղեդիով երգվել է վեց երգ: Առաջին տարբերակը գետեղված է Գ. Տեր-Ալեքսանյանի ձեռագիր երգարանում՝ սիրային քնարական տեքստով, որը հետագայում, ժամանակի գաղափարներին հարմարեցնելով, փոխարինվել է հայրենասիրականով: Տարբերակներից մեկը սովորաբար կրում է «Անձունք Պոլսեցի հայ մանկանց» (5. էջ 70) անվանումը: Հաջորդ երկու տարբերակներն արդեն նվիրված են Մկրտիչ Խրիմյանին, որը հռչակված էր Հայրիկ գրական և ժողովրդական անունով:

Հայրիկը 1880-ին Վան գնաց՝ սովյալներին նպաստ բաժանելու, նպատակ ունենալով երկրագործների դպրոց հիմնել Վարագում, սակայն 1885-ին համիդական կառավարությունը հեռացրեց նրան Վանից, ապա արքունից Երուսաղեմ (6. էջ 664): Ահա այս հայաձանքների կապակցությամբ է գրված Ջանիկյանի տեքստը, որի բովանդակությունն առավել հասկանալի է դառնում այս պատմական իրադարձությունների ներքո: Մկրտիչ Խրիմյանի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով նույն հեղինակը 1892 թվականին «հրապարակ է հանել ուրախ, ցնծագին, «պատասխան» երգը (Այսպիսի «պատասխան» երգի երևույթը հայ իրականության մեջ տարածված է եղել)» (2. էջ 175):

Այս երգի զարգացման ընթացքը եզրափակող տարբերակը «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիքն» է, բայց ժամանակի ընթացքում, տարիներ շարունակ կենցաղավարվելով Հայաստանի տարբեր վայրերում, կատարվել է այլ ընկալումով՝ որպես վասպուրականցի հոր և որդու հայրենասիրական երկխոսություն: Հայրիկ անունն այս դեպքում գրվում է փոքրատառով: Այս երգի անգուգական տարբերակ գտանք Հայրիկ Մուրադյանի ձայնից գրառած «Հայրենի երգեր» ժողովածուում (7. էջ 155): Ինչպես գրում է Ծանոթագրություններում Ա. Ա. Փահլևանյանը՝ երգը ներկայացված է այնպես, ինչպես այն երգել են Ջնուկ գյուղում:

Այս երգի երկու տարբերակ գտնում ենք Ա. Ա. Սարյանի «Հայ քաղաքային ժողովրդական երգերի ընտրանիում»: Երկու գրանցումների հեղինակն էլ Կոմիտասն է: Նմուշները տարբերվում են իրարից. առաջինը փոփոխական չափ ունի, երկրորդը՝ անփոփոխ 3/4 (3. էջ 191-192): Կոմիտասյան խմբերգային մշակումներն ար-

ված են վերը նկարագրված երկու տարբերակի հիման վրա՝ առանց մետրաթիթմական և մեղեդային փոփոխությունների:

Ինչպես հայտնի է, 1898 թվականի նոյեմբերին, դեռևս ուսանող Կոմիտասը Բեռլինից Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին գրել է. «Եկող տարի Ճեմարանի 25-ամյակն է: Հարկավոր է մի քանի բան պատրաստ ունենալ... Դիտարկելու ուժս գործ կդնեն մի խումբ կազմելու... Ես արդեն ունիմ «Տէր, կեցո»-ն և «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք»-ը թե՛ խմբի և թե՛ նվագի համար, և կպատրաստեմ ժողովրդականներից էլ ընտիրները»: Կոմիտաս վարդապետը, ոգևորված իր համերգային գործունեությամբ, ստեղծագործական մեծ եռանդով հավաքեց, մշակեց և բեմ հանեց ոչ միայն գեղջկական, այլև քաղային երգերի անկրկնելի նմուշներ, որոնց փայլն ու հմայքը չի խամրում ժամանակի ընթացքում և որոնք ամրագրում են հայ երգի բազմազան ու բարձրարժեք գեղարվեստական դրսևորումները:

XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային ինքնագիտակցության բարձրացման պայմաններում ծրնունդ առած և մեծ թափով զարգացած հայ քաղաքային ժողովրդական երգը մեր օրերում ևս շարունակում է կենցաղավարել, նոր թափ է առնում՝ հնչելով ժողովրդի շուրթերից և բխելով ամեն հայի սրտից ու հոգուց:

Սակայն մերօրյա քաղաքային արդի երաժշտական խայտաբղետ միջավայրի և տեխնիկական սարքերի ու տեղեկատվական դաշտի ընդլայնման պատճառով երգերը կրում են այլևայլ ազդեցություններ: Երբեմն անձանաչելի փոխվում են հայ ավանդական քաղաքային երգի հնչողությունը, և ինչն ավելի կարևոր է կատարման եղանակը: Երգեցողության արևելյան ելևէջների անխուսափելի շռայլ օգտագործումը ցածրաձայն երաժշտության տարածման պատճառ է հանդիսանում: Ուստի ճանաչելով և պահպանելով մեր բուն ավանդական երգերն ու կատարումների ազգային ավանդական առանձնահատկությունները, հարկավոր է ամեն կերպ նպաստել մեր մշակույթի մաքրման և հղկման գործընթացին:

Ծ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Սարյան Ա. Ա., Հայ քաղաքային ժողովրդական երգերի հաւընտիր, Եր., Կոմիտաս., 2010 թ.: Saryan A. A., Hay qaghagayin zhoghovrdakan ergeri hat'ntir, Yer., Komitas., 2010 th.
2. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 4, խմբ.՝ Ռ. Աթայանի, Եր., Հայաստան., 1976 թ.: Komitas, Yerkeri zhoghovatsu, h. 4, khmb.: R. Athayani, Yer., Hayastan., 1076 th.
3. Նալբանդյան Մ., Ընտիր երկեր, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1953 թ.: Nalbandyan M., 'ntir erker, Yer., HSSR GA hrat., 1953 th.
4. Երգարան, կազմ.՝ Վ. Չաքմիչյան, Եր., Անահիտ, 1993 թ.: Yergaran, kazm.: V. Chaqumishyan, Yer., Anahit, 1993 th.
5. Սոխակ Հայաստանի, լիակատար երգարան, հ. 1, Բագու, Հայկ. Մարդասիրոց տպ., 1874 թ.: Sokhak Hayastani, liakatar yergaran, h. 1, Bagu, Hayk. Mardasirg tp., 1874 th.
6. Փափագեան Վ., Պատմութիւն հայոց գրականութեան, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 1910 թ.: Phaphazean V., Patmuthiwn Hayvotz grakanuthean, Thiflis, N. Aghaneantzi, 1910 th.
7. Փահլևանյան Ա. Ա., Հայրենի երգեր, Եր., Նոր գիրք, 2007 թ.: Phahlevanyan A. A., Hayreni erger, Yer., Nor girq, 2007 th.

Բանալի-քաներ. Ազգային-ազատագրական պայքար, հայրենասիրական երգեր, քաղաքային երգեր, տարբերակներ, Կոմիտաս վարդապետ, Խրիմյան Հայրիկ, մշակումներ:

Ключевые слова: национально-освободительное движение, патриотические песни, городские песни, варианты, Комитас архимандрит, Хримян Айрик, обработки.

Keywords: national liberation movement, patriotic songs, urban songs, variants, Komitas Archimandrite, Khrimian Hayrik, arrangements.

Տեղեկություններ հեղինակի մասին. ԱԹԱՆԱՍՅԱՆ ՆՈՒՆԵ ՌՈՄԵՈՅԻ (1967 թ. թ. Երևան): Ավարտել է 1990 թ. Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (ղեկ. պրոֆ. Ս. Գ. Հարությունյան): 1993-ից առ այսօր աշխատում է ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում, դասախոս, դոցենտ (2017-ից) ամբիոնի վարիչ (2018-ից) վարում է «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Հայ հոգևոր երաժշտություն» և «Նոր հայկական նոտագրություն» դասընթացները նաև 2001-ից առ այսօր ԵՊԿ երաժշտության տեսության ամբիոնի դասախոս վարում է «Հարմոնիա», «Սոլֆեջո» և «Արևմտաեվրոպական երաժշտատեսական համակարգեր» դասընթացները: 2000-ից Հայաստանի պետական կամերային երգչախմբի արտիստ, գեղարվեստական ղեկ. Ռ. Սյրեյան: 2008-ից «Հայ Ասպետ» հեռուստատեսության երաժշտական փորձագետ և հանձնախմբի անդամ: Հեղինակ է գիտական հոդվածների: «Ստեփան Գեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր» անտիպ ժողովածուն», //Երաժշտական Հայաստան, 1 (24) 2007 թ., «Ստեփան Գեմուրյանի դերը հայ մշակույթի և կրթության զարգացման գործում», //Երաժշտական Հայաստան 4 (31) 2008-1 (32)2009 թթ. էջ 75-77, Ստեփան Գեմուրյան «Հայ ժողովրդական երգեր» /«Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ԵՊԿ, մատենաշար, պրակ 9, 2013 թ., Սահակ Ամատունի «Ժողովրդական երգերի ձայնագրային ժողովածու», /«Հայ ժողովրդական երգեր և նվագներ», ԵՊԿ, մատենաշար, պրակ 11, 2014 թ.:

Сведения об авторе: АТАНАСЯН НУНЕ РОМЕОВНА (род.1967, Ереван). В 1990г. окончила музыкаловедческое отделение ЕГК им.Комитаса (класс проф. М. Г. Арутюнян). С 1993 по сей день работает на кафедре Армянской музыкальной фольклористики ЕГК преподавателем, доцентом (2017), заведующая кафедрой с 1918-го года, ведет курсы дисциплин: "Армянское народное музыкальное творчество", "Армянская духовная музыка", "Новое армянское нотирование". Одновременно с 2000 г. по сей день преподает дисциплины: гармония, сольфеджио, западноевропейские музыкально-теоретические системы на кафедре теории музыки ЕГК. С 2000 г. - артистка Государственного камерного хора. Автор научных статей: "Неизданный сборник Степана Демуряна "Народные армянские песни" (//Музыкальная Армения, #1(24)2007), "Роль Степана Демуряна в армянской культуре и развитии образования" (//Музыкальная Армения, #4(31)2008)1(32)2009, С. 75-77), "Степан Демурян" / "Народные армянские песни и наизгиши" (ЕГК, серия изданий, вып.9, 2013), "Саак Аматауни. Сборник нотированных народных песен", / "Народные армянские песни и наизгиши" (ЕГК, серия изданий, вып. 11, 2014).

Information about an author: ATANASYAN NUNE ROMEO (born in 1967, Yerevan). In 1990 she graduated from YSC Department of Musicology professional class of Professor Margarita Gabriel Harutyunyan From 1993 till today works in YSC in the department of Armenian musical folklore studies. Pedagogy, docent (2017), a Head of Department Armenian musical folklore studies (2018). Armenian folk music and Armenian spiritual music courses and also from 2001 till today she is a lecturer of YSC's department of music theory she teaches courses of "Harmony", "Solfejgio" and "Western musical theoretical systems". From 2000 she is an Armenia Chamber Choir Artist. She is an author of scientific articles "Stepan Demouryan's "Armenian folk songs" unpublished collection" //Musical Armenia 1 (24) 2007, "Stepan Demouryan's role in the development of Armenian culture and education", //Musical Armenia 4 (31), 2008-1 (32) 2009 p. 75-77, Stepan Demouryan "Armenian folk songs", "Armenian folk songs and plays", YSC series 9, 2013, "Sahak Amatuni's "Folk songs recorded collection" / "Armenian folk songs and plays", YSC, series, 11, 2014.

Րեզյումե

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК **Нуне Ромеовна Атанасян**. – “Армянские городские народные песни в творчестве Комитаса архимандрита”.

На протяжении XIX века национальное мышление переживало период подъема. Признаки пробуждения национального самосознания были вызваны активной культурной деятельностью; созданы многочисленные журналы, организации, в периодических изданиях публиковались образцы народных песен, научные обзоры и описания национальных костюмов. Первые образцы, опубликованные в периодических изданиях – патриотические песни национально-освободительного движения. Городские песни, находящиеся в центре внимания, были собраны, записаны и опубликованы в многочисленных сборниках песен. Огромную работу в этой области сделали Г. Еранян, К. Кара-Мурза, М. Екмалиян, С. Аматауни, А. Брутян, С. Демурян, М. Тумаджан, В. Самвелян, С. Меликян и др.

Комитас архимандрит, в свою очередь, также высоко ценил национально-патриотические песни. Наряду с народными песнями он собирал и записывал образцы этого жанра.

Во время своей творческой карьеры Комитас архимандрит регулярно ссылался на городские песни. Будучи одним из ведущих интеллектуалов своего времени, он не мог оставаться равнодушным к различным проявлениям городской культуры, особенно к национально-освободительным и патриотическим песням. В четвертом томе собрания сочинений Комитаса представлены работы в этом жанре, к которым мастер обращался со студенческих лет (с 1890 по 1914 год).

В этой статье мы представляем обзор городских народных песен “Сон” и “Айрик, Айрик, твое Отечество”.

Summary

Musicologist, PhD Candidate, Docent of YSC **Nune Romeo Atanasyan**. – “Armenian urban folk songs in Archimandrite Komitas works”.

Throughout the 19th century, national thinking experienced a period of boom. Signs of the awakening of national identity were triggered by vigorous cultural activity; numerous magazines, organizations were created, numerous samples of folk songs, scientific reviews and descriptions of national costumes were published in periodicals. The first samples published in periodicals are patriotic songs of the national liberation movement. Urban songs in the spotlight have been compiled, recorded and published in numerous song collections. Huge work in this area was done by G. Eranian, K. Kara-Murza, M. Ekmalian, S. Amatuni, A. Brutian, S. Demurian, M. Toumajan, V. Samvelian, S. Melikian and others.

Komitas Archimandrite, in turn, also highly appreciated the national-patriotic songs. Along with folk songs, he collected and recorded samples of this genre.

During his creative career, Komitas Archimandrite regularly referred to Urban songs. Being one of the leading intellectuals of his time, he could not remain indifferent to various manifestations of urban culture, especially to national liberation and patriotic songs. The fourth volume of Komitas Collected works presents songs in this genre, which Archimandrite elaborated from his student years, from the 1890's to 1914.

In this article we present an overview of urban folk songs “Dream” and “Hayrik, Hayrik”.